

էր Ս. Սարգիս, այժմեան Առաջնորդարանի հիւսիսակողմի
առաջին փողոցին մէջ Ղարսի վանքի տանիքին վրայ կառուց-
ուած վերնայարկ ժամուռ մը, որ մեր սեփականութիւնն էր
ներկայ թուականէն ստիպւին մինչև կէս դար առաջ, ինչպէս
կ'հասկցուի մեր Առաջնորդարանի ժողովարան տրձանագրու-



(թիւ 11)

հաշխար հին, անթուական

թիւններէն և Հմայեակ վրդ. Գիմարսեանի վիճակագրական
մէկ գրքոյկէն:

Այս եկեղեցին գոյութիւն ունէր և Հայոց կ'պատկանէր
անշուշտ ժէ. դարէն ալ շատ առաջ. վանագի Գահիրէի մէջ
եղած արձանագրութեան մը համեմատ — այժմ անհետ — զոր
կ'չիչէ Աստուածատուր պատմագիր (Նոյն. անդ), Գրիգոր
վարդապետի մը առաջնորդութեան սրով նորոգուած է ան,